ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
ավտոմեքենայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի բացման նիստը տեղի է ունեցել 23.03.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Հ. Սարոյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Բ. Ալեքսանյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Հ. Հակոբովը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար ավտոմեքենայի ձեռքերման նպատակով ս.թ. մարտի 16-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, ս.թ. մարտի 23-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Կարկոմավտո ՍՊԸ	corporate@autogroup.am	00059627

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Կարկոմավտո ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	1 չափաբաժին Ավտոմեքենա		
		Նախահաշվային գին՝ 6 500 000 ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ		
		արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	Կարկոմավտո ՍՊԸ	5 166 667	1 033 333	6 200 000

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ա) առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Կարկոմավտո ՍՊ ընկերությունը 1-ին չափաբաժնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիր/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.4 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. մարտի 29-ին, ժամը 15.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Բ. Ալեքսանյան

_____ Հ. Հակոբով

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան